ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

30 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

30 հուլիսի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 21 անդամներ:

Բացակա էին՝ Գոհար Հակոբյանը, Արմինե Սարգսյանը, Նարինե Ստեփանյանը, Անի Ազատյանը, Արտակ Աշիկյանը, Արմեն Եփրեմյանը, Անդրանիկ Կիրակոսյանը, Արաքսյա Համբարձումյանը, Հովիկ Հովակիմյանը, Սոկրատ Հովսեփյանը, Արտավազդ Մարգարյանը, Իշխան Սահակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Հրայր Հակոբջանյան, Սուրեն Մկրտչյան, Հրաչյա Հովհաննիսյան, Ատոմ Ատոմյան, Գոհար Հովսեփյան, Մերի Մելիքյան, Աննա Հովհաննիսյան, Անժելա Գուլգուլյան, Արսեն Եփրեմյան, Նարեկ Գալստյան, Խորեն Հովակիմյան, Հովհաննես Հովհաննիսյան, Արկադի Մանուկյան, Աշոտ Խալաթյան, Անուշավան Ավետիսյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը

Նիստը արձանագրում էր բաժնի պետի ժ/պ /2.1-11/՝ Անժելա Գուլգուլյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 30-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.4 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԺԵԼԱ ԳՈՒԼԳՈՒԼՅԱՆ/

1.5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՎԻՆ ԳՅՈՒՂԻ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 43 ՀՈՂ ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԿՈՍԻ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

1.6 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՆՈՒՇ ԳՅՈՒՂԻ Զ.ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ԳԵՂԱՄ ՀՐԱՆՏԻ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

1.7 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ՍՈՍԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

1.8 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՔՈՒՉԱԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԳԱՅԱՆԵ ԳԱԳԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

1.9 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԱՐՏԱՇԱՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

1.10 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.11 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.12 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԱՂԲԱՏԱՐ ԴՈՆԳՖԵՆԳ (DONGFENG CL5180ZLSHQ) «ԱՐՏԱՇԱՏ-ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.13 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԻՆՈՄԱՉ 722 ԷՅՋ (SINOMACH 722H) ՄՈԴԵԼԻ ԱՎՏՈԳՐԵՅԴԵՐՆ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.14 ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.15 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 114-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.16 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.17 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 154-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի և Արտաշատի համայնքապետարանի միջև 2025 թվականի ապրիլի 28-ին կնքված պետության կողմից ֆինանսական միջոցների հատկացման N25/1238-12001/1-ԱՇ պայմանագրին համապատասխան 2025 թվականի հունիսի 23-ին կնքված թիվ 1 Համաձայնագիրը, 2025 թվականի հուլիսի 2-ին և 2025 թվականի հուլիսի 14-ին կնքված կապիտալ սուբվենցիայի տրամադրման պայմանագրերը Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

1) 28.50. 00 գործառնական դասակարգման /օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի վարչական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ/ 900415003020 գանձապետական եկամտային հաշիվն ավելացնել 60 353 666 /վաթսուն միլիոն երեք հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր վաթսունվեց /ՀՀ դրամով.

2) 38.01.00 գործառնական դասակարգման /պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ/ 900415151373 գանձապետակամ եկամտային հաշիվն ավելացնել 450 122 100 /չորս հարյուր հիսուն միլիոն մեկ հարյուր քսաներկու հազար մեկ հարյուր / ՀՀ դրամով.

3)11.01.02.51 գործառնական դասակարգման /վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/ 4891 հոդվածն ավելացնել 45 013 872 /քառասունհինգ միլիոն տասներեք հազար ութ հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամով.

4) 09.01.01.51 գործառնական դասակարգման /նախադպրոցական ուսուցում/ 4823 հոդվածն ավելացնել 9 688 000 /ինը միլիոն վեց հարյուր ութսունութ հազար/ ՀՀ դրամով.

5) 09.01.01.51 գործառնական դասակարգման /նախադպրոցական ուսուցում/ «Արտաշատ համայնքի Մրգավետ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բյուջեի 4511 հոդվածն ավելացնել 420 717 /չորս հարյուր քսան հազար յոթ հարյուր տասնյոթ/ ՀՀ դրամով.

6)09.01.01.51 գործառնական դասակարգման /նախադպրոցական ուսուցում/ «Արտաշատ համայնքի Բաղրամյան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բյուջեի 4511 հոդվածն ավելացնել 329 228 /երեք հարյուր քսանինը հազար երկու հարյուր քսանութ /ՀՀ դրամով.

7) 09.01.01.51 գործառնական դասակարգման /նախադպրոցական ուսուցում/ «Արտաշատ համայնքի Արևշատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բյուջեի 4511 հոդվածն ավելացնել 307 395 /երեք հարյուր յոթ հազար երեք հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամով.

8) 09.01.01.51 գործառնական դասակարգման /նախադպրոցական ուսուցում/ «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բյուջեի 4511 հոդվածն ավելացնել 417 015/չորս հարյուր տասնյոթ հազար տասնհինգ /ՀՀ դրամով.

9) 09.01.01.51 գործառնական դասակարգման /նախադպրոցական ուսուցում/ «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բյուջեի 4511 հոդվածն ավելացնել 885 999/ութ հարյուր ութսունհինգ հազար ինը հարյուր իննսունինը /ՀՀ դրամով.

10)09.01.01.51 գործառնական դասակարգման /նախադպրոցական ուսուցում/ «Արտաշատ համայնքի Վերին Արտաշատ գյուղի «Լուսնթագ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բյուջեի 4511 հոդվածն ավելացնել 3 291 440 /երեք միլիոն երկու հարյուր իննսունմեկ հազար չորս հարյուր քառասուն /ՀՀ դրամով.

11) 09.06.01.51 գործառնական դասակարգման /նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում /5112 հոդվածն ավելացնել 450 122 100 / չորս հարյուր հիսուն միլիոն մեկ հարյուր քսաներկու հազար մեկ հարյուր / ՀՀ դրամով.

12) 04.05.01.51 գործառնական դասակարգման /ա/բ ծածկի վերանորոգում /5113 հոդվածը պակասեցնել 444 000 000 / չորս հարյուր քառասունչորս միլիոն / ՀՀ դրամով.

13) 06.04.01.52 գործառնական դասակարգման /ա/լ ցանցի շահագործում և պահպանում /5113 հոդվածը պակասեցնել 568 000 000 /հինգ հարյուր վաթսունութ միլիոն / ՀՀ դրամով.

14) 06.04.01.52 գործառնական դասակարգման /ա/լ ցանցի շահագործում և պահպանում /5112 հոդվածն ավելացնել 1 012 000 000 /մեկ միլիարդ տասներկու միլիոն / ՀՀ դրամով.

2.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 392-Ն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 155-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 27-րդ և 27.1-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ եկամուտների աղբյուրները և ծախսերի բացվածքը համապատասխանաբար թիվ 1, թիվ 2, թիվ 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 156-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 157-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆԺԵԼԱ ԳՈՒԼԳՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Արխիվային գործի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. 1996 թվականից մինչև 2022 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Արտաշատ համայնքի սեփականություն համարվող սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ ենթակետերով նշված արխիվային փաստաթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:

1) Արտաշատ համայնքի Աբովյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Աբովյանի համայնքապետարանի 1996-2022թթ. արխիվային փաստաթղթեր.

2) Արտաշատ համայնքի Արաքսավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Արաքսավանի համայնքապետարանի 2016-2022թթ. արխիվային փաստաթղթեր:

3) Արտաշատ համայնքի Բաղրամյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Բաղրամյանի համայնքապետարանի 1996-2021թթ. արխիվային փաստաթղթեր:

4) Արտաշատ համայնքի Բուրաստան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Բուրաստանի համայնքապետարանի 2016-2022թթ. արխիվային փաստաթղթեր:

5) Արտաշատ համայնքի Դալար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Դալարի համայնքապետարանի 1996-2022թթ. արխիվային փաստաթղթեր:

6) Արտաշատ համայնքի Դիմիտրով բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Դիմիտրովի համայնքապետարանի 1996-2022թթ. արխիվային փաստաթղթեր:

7) Արտաշատ համայնքի Մասիս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Մասիսի համայնքապետարանի 1996-2022թթ. արխիվային փաստաթղթեր:

8) Արտաշատ համայնքի Մխչյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Մխչյանի համայնքապետարանի 1997-2021թթ. արխիվային փաստաթղթեր:

9) Արտաշատ համայնքի Մրգանուշ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Մրգանուշի համայնքապետարանի 1997-2022թթ. արխիվային փաստաթղթեր:

10) Արտաշատ համայնքի Հովտաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ Հովտաշենի համայնքապետարանի 1996-2021թթ. արխիվային փաստաթղթեր:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 158-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՎԻՆ ԳՅՈՒՂԻ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 43 ՀՈՂ ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԿՈՍԻ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2-րդ կարգի մասնագետ, Այգեստան բնակավայրի վարչական ղեկավարի պարտականությունները կատարող Լիլիթ Հարությունյանի՝ 2025 թվականի հուլիսի 09-ի թիվ Ա-8748 գրությունը և հաշվի առնելով Արտաշատ համայնքի Դվին գյուղի Փավստոս Բուզանդ փողոցի թիվ 43 հող հասցի բնակչուհի Սուսաննա Հախնազարյանի՝ 2025 թվականի հուլիսի 09-ի թիվ Ք-8747 դիմումը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.54 գործառնական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն հատկացնել Սուսաննա Մարկոսի Հախնազարյանին՝ եղբոր՝ Սերգո Մարկոսի Հախնազարյանի բուժման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 159-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՆՈՒՇ ԳՅՈՒՂԻ Զ.ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ԳԵՂԱՄ ՀՐԱՆՏԻ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Արտաշատ համայնքի Մրգանուշ բնակավայրի վարչական ղեկավար Արկադի Մանուկյանի՝ 2025 թվականի հուլիսի 15-ի թիվ Ա-8934 գրությունը և հաշվի առնելով Արտաշատ համայնքի Մրգանուշ գյուղի Զ.Անդրանիկի փողոցի թիվ 4 տան բնակիչ Գեղամ Հրանտի Ղարիբյանի՝ 2025 թվականի հուլիսի 14 թիվ Ք-8905 դիմումը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.54 գործառնական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն հատկացնել Գեղամ Հրանտի Ղարիբյանին՝ կնոջ՝ Լուսվարդ Ռազմիկի Ղարիբյանի բուժման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 160-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ՍՈՍԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, հաշվի առնելով Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 4 տան բնակիչ Արմեն Սոսիկի Մարգարյանի՝ 2025 թվականի հուլիսի 24-ի թիվ Ք-9391 դիմումը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.54 գործառնական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4729 (այլ

նպաստներ բյուջեից) հոդվածից 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն հատկացնել Արմեն Սոսիկի Մարգարյանին՝ հաշմանդամություն ունեցող դստեր՝ Սվետլանա Արմենի Մարգարյանի (ծնվ. 30.05.2023թ.) վերականգնողական բուժման համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 161-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՔՈՒՉԱԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԳԱՅԱՆԵ ԳԱԳԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Արտաշատ համայնքի Քաղցրաշեն բնակավայրի վարչական ղեկավար Աշոտ Խալաթյանի՝ 2025 թվականի հուլիսի 24-ի թիվ Ա-9332 գրությունը և հաշվի առնելով Արտաշատ համայնքի Քաղցրաշեն գյուղի Քուչակի փողոցի թիվ 9 տան բնակիչ Գայանե Գագիկի Դավթյանի՝ 2025 թվականի հուլիսի 23-ի թիվ Ք-9288 դիմումը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.54 գործառնական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն հատկացնել Գայանե Գագիկի Դավթյանին՝ վիրահատության համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 162-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԱՐՏԱՇԱՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով «ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» Արտաշատի տարածքային բաժանմունքի նախագահ Ս.Մանջիկյանի 2025 թվականի հուլիսի 24-ի թիվ S-9364 գրությունը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.53 գործառնական դասակարգման (հասարակական կազմակերպություններին աջակցություն) 4819 տնտեսագիտական հոդվածից (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) «ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» հասարակական կազմակերպության անունով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված 1570001055670100 հաշվեհամարին փոխանցել 970 000 (ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ ընթացիկ ֆինանսական խնդիրների լուծմանն օժանդակելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 163-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի՝ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 11-րդ հավելվածում 27-րդ տողի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի կարիքների համար գույքի ձեռքբերմամբ պայմանավորված (Մասնագիտացված աղբատար մեքենա Դոնգֆենգ (DONGFENG CL5180ZYSHQ), քանակը՝ 2 հատ, միավորի գինը՝ 29 400 000/քսանինը միլիոն չորս հարյուր հազար/ՀՀ դրամ)՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 164-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի՝ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 11-րդ հավելվածում 26-րդ տողի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ ՀՏԶՀ) և «Սպեցմաշ» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի մարտի 06-ին կնքված SILD-AFG-28/2/3/4 (Լոտ 2) պայմանագրով ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի կարիքների համար Արտաշատի համայնքապետարանին գույքի փոխանցմամբ պայմանավորված (Ավտոգրեյդեր (եռաթև փխրեցուցիչով և առջևի բուլդոզերային հրիչով), քանակը՝ 1 հատ, մոդելը՝ Sinomach 722H , գինը՝ 46 490 000/քառասունվեց միլիոն չորս հարյուր իննսուն հազար/ՀՀ դրամ)՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 165-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԱՂԲԱՏԱՐ ԴՈՆԳՖԵՆԳ (DONGFENG CL5180ZLSHQ) «ԱՐՏԱՇԱՏ-ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և «Պետական ոչ

առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող թվով երկու մասնագիտացված աղբատար Դոնգֆենգ (Dongfeng CL5180ZYSHQ) մեքենաներն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արտաշատ-կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ին՝ Արտաշատ համայնքում իր իրավասությունների շրջանակներում ծառայություններ մատուցելու նպատակով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 166-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԻՆՈՄԱՉ 722 ԷՅՋ (SINOMACH 722H) ՄՈԴԵԼԻ ԱՎՏՈԳՐԵՅԴԵՐՆ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Սինոմաչ 722 Էյջ (Sinomach 722H) մոդելի ավտոգրեյդերն (եռաթև փխրեցուցիչով և առջևի բուլդոզերային հրիչով) անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արտաշատ համայնքի Բարեկարգ Արտաշատ» ՀՈԱԿ-ին՝ Արտաշատ համայնքում իր իրավասությունների շրջանակներում ծառայություններ մատուցելու նպատակով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 167-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի՝ «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման 39-րդ կետի 1-ին ենթակետը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Քարտեզագրման սխալի հետևանքով որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված՝ Արտաշատ համայնքի Դալար գյուղում գտնվող, 03-032-0109-0004 կադաստարային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականության սուբյեկտի սխալն ուղղել որպես Արտաշատ համայնքի սեփականություն:

2. Քարտեզագրման սխալի հետևանքով որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված՝ Արտաշատ համայնքի Դալար գյուղում գտնվող, 03-032-0110-0024 կադաստարային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականության սուբյեկտի սխալն ուղղել որպես Արտաշատ համայնքի սեփականություն:

3. Քարտեզագրման սխալի հետևանքով որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված՝ Արտաշատ համայնքի Դալար գյուղում գտնվող, 03-032-0110-0025 կադաստարային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականության սուբյեկտի սխալն ուղղել որպես Արտաշատ համայնքի սեփականություն:

4. Կատարել համապատասխան փոփոխություն համայնքի հողային հաշվեկշռում:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 168-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 114-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 14-ի՝ «Արտաշատ համայնքի Հովտաշեն գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող 5,046208 հա մակերեսով հողամասը առանց մրցույթի, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» N 114-Ա որոշման 1-ին կետում «03-

055-0111-0014» թվերը և կետադրական նշանները փոխարինել «03-055-0111-0017» թվերով և կետադրական նշաններով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 169-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 23/06/2025 թվականի N 01//04106-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Համաձայնել 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Արտաշատ համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն կից ներկայացվող 22 և 22ա ձևերի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 170-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի N 431-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ և 13-րդ կետերով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 23/06/2025 թվականի N 01//04107-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Համաձայնել 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Արտաշատ համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը՝ համաձայն կից հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 171-Ա)*

Ավագանու անդամներ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԵՐՄՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԳԱՐԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍԱՅԱԴՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԴԵՐՄՈՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Անժելա Գուլգուլյանը _____